ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/2530-24 առ 20 11 2024թ.

«Մաքս Շին» ՍՊԸ
տնօրեն
Վ. Պետրոսյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/219 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար տնտեսական, սանիտարական և լվացող միջոցների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի մայիսի 23-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/219 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում», սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով 8-րդ չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան անձեռոցիկները Ձեր կողմից մատակարարված չեն:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները և Ձեր կողմից ստացված գրությունը տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև 2024թ. մայիսի 23-ին կնքված № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-57/24-01/219 պայմանագիրը 8-րդ չափաբաժնի մասով և առաջարկում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (412 476 ՀՀ դրամ) և որակավորման (618 714 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91